ՀԱՆՐԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆԻ ԳՐԱՍԵՆՅԱԿԸ ԳԵՐԱԿՇԻՌ ԴԵՊՔԵՐՈՒՄ ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԿՏՐԱՄԱԴՐԻ ԱՌՑԱՆՑ.ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

16.03.2020 21:05

Հարգելի քաղաքացիներ,

Հաշվի առնելով նոր տիպի կորոնավիրուսի (COVID-19) վարակի տարածման կանխարգելման անհրաժեշտությունը, Հայաստանում նշված հարցի հետ կապված որոշակի կանխարգելիչ միջոցառումների իրականացումը.

ՀՀ փաստաբանների պալատի հանրային պաշտպանի գրասենյակը մինչև 2020 թվականի ապրիլի 14-ը սահմանափակելու է քաղաքացիների մուտքը հանրային պաշտպանի գրասենյակ՝ գերակշիռ դեպքերում խորհրդատվությունն ապահովելով հեռախոսակապի, տեսազանգի, էլեկտրոնային փոստի և այլ հնարավոր միջոցներով:

Բոլոր այն դեպքերում, երբ անվճար իրավաբանական օգնության հրատապությունը պայմանավորված կլինի դատավարական ժամկետների պահպանման անհրաժեշտությամբ՝ հանրային պաշտպանի գրասենյակը սահմանված կարգով քաղաքացիներին կցուցաբերի իրավաբանական օգնություն:

Վերը նշվածով պայմանավորված, խնդրում ենք բոլոր տեսակի դիմումները ՀՀ փաստաբանների պալատի հանրային պաշտպանի գրասենյակին հասցեագրել փոստով կամ էլեկտրոնային փոստով:

Խորհրդատվության տրամադրումը երկուշաբթիից-ուրբաթ ժամը 10:00-17:00

Դիմումների համար՝ էլ. փոստ (e-mail): pashtpan@advocates.am

Փոստային հասցե՝ ՀՀ, Երևան, Զաքյան 7-2

Խորհրդատվության համար հեռ.՝ (+374) 10 600 714

Viber (+374) 33 600 714

WhatsApp (+374) 33 600 714

Skype (+374) 33 600 714

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })